

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ ԳՈՐԾԱՐԱՐ ՎԱՐՎԵԼԱԶԵՎԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

«Կոնվերս բանկի» աշխատակիցները մեծ նշանակություն են տալիս գործարար վարվելաձևի կանոնների պահպանմանը՝ թե՛ միմյանց հետ համատեղ աշխատանքի ընթացքում, և թե՛ հաճախորդների, գործընկեր կազմակերպությունների, մատակարարների հետ հարաբերություններում: Բանկի անձնակազմը խստորեն հետևում է վարվելաձևի սահմանված սկզբունքներին՝ ապահովելով մատուցվող ծառայությունների և հաճախորդների սպասարկման բարձր մակարդակը:



«Կոնվերս բանկի» հաջողության գրավականներից կարևորագույնը կազմակերպության աշխատակիցներն են՝ նրանք ովքեր մեկնարկում և զարգացնում են կազմակերպության գործնական մեխանիզմները, կերտում և հզորացնում են կազմակերպության վարկանիշը և հաղթում մշտապես զարգացող մրցակցային դաշտում: Աշխատակիցները իրենց գործողություններով և գործարար պահվածքով բարձր են պահում բանկի անունը և բարի համբավը: Բանկի անձնակազմը ներկայացված է արհեստավարժ և նվիրված մասնագետների թիմով, որի յուրաքանչյուր անդամ անհատական և թիմային աշխատանքում սատարում է կազմակերպության ռազմավարական նպատակներին ընդունելով ներքին կորպորատիվ մշակույթը և ղեկավարվելով կազմակերպության ներսում ձևավորված արժեքներով: Մեր հաճախորդների սպասելիքները արդարացնելու, բանկային ծառայությունների շարքում մեր ծառայությունների գերազանցությունը ապահովելու համար մենք.

- խստորեն պահպանում ենք օրենսդրության և բանկի ներքին կանոնակարգերի պահանջները
- հետևում ենք բանկի հաճախորդների սպասարկման կանոնակարգերին, կանոններին և գործարար ավանդույթներին, ինչպես նաև բողոք-նամակների ընդունման, արձագանքման և վերլուծության քաղաքականությանը:

Վարվելաձևի կանոնների խախտում թույլ տված աշխատակիցը տույժի է ենթարկվում՝ Բանկի ներքին կարգերին համապատասխան: Բանկը հավաքագրման, ինչպես նաև աշխատանքի ընթացքում անձնակազմի համար ապահովում է խտրականությունից զուրկ, պատշաճ միջավայր և աշխատանքային պայմաններ:

Մեր բանկը գործում է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքին խիստ համապատասխան և բացառում է ցանկացած գործողություններ, որոնք կարող են բերել մրցակցության սկզբունքների խախտմանը կամ շուկայի մոնոպոլիզացմանը:

Մենք բացառում ենք նույնիսկ անօրինականի տպավորություն թողնող կամ օրենքներին, գործարար ավանդույթներին հակասող, մրցակիցների կամ նրանց և հաճախորդների միջև վստահելիության, արդարության, ճշմարտության և անկողմնակալության սկզբունքները խախտող ցանկացած գործողությունները:

Բանկի աշխատակիցները իրենց գործունեության ընթացքում ղեկավարվում են «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով և բանկի ներքին իրավական ակտերով, ինչը նշանակում է, որ մենք երրորդ անձանց չենք հայտնում և չենք հրապարակում բանկային, առևտրային գաղտնիք կազմող տեղեկություններ: Մենք օգտագործում ենք աշխատանքի հետ անմիջականորեն առնչվող ցանկացած գաղտնի տեղեկատվություն միայն Բանկի կողմից սահմանված նպատակների իրականացման համար:

Մեր բանկի գովազդը և վաճառքը իրականացվում է բարեխիղճ, ազնիվ և օրինական ճանապարհներով: Մեր ծառայությունների գովազդը համապատասխանում է դրանց իրական հատկանիշներին:

Գործունեության բոլոր ոլորտներում բանկն առաջնորդվում է հետևյալ հիմնարար արժեքներով:

1. Արժանապատվություն և հարգանք

«Կոնվերս բանկի» աշխատակիցները հարգում են բոլոր մարդկանց՝ անկախ զբաղեցրած պաշտոնից, սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ, լեզվական պատկանելությունից, ծագումից, դավանանքից, սոցիալ - տնտեսական դիրքից, տարիքից, բնակության վայրից, քաղաքական հայացքներից, հասարակական կազմակերպություններում անդամակցությունից կամ դրա բացակայությունից և այլ հանգամանքներից:

2. Հաճախորդամետություն

Հաճախորդը գտնվում է մեր ուշադրության կիզակետում և մեր գործունեությունն ու ջանքերն առաջին հերթին ուղղված են հաճախորդների բարձրակարգ սպասարկմանը:

Որպես «Կոնվերս բանկի» աշխատակիցներ՝ մենք անկեղծորեն շահագրգռված ենք նպաստել մեր հաճախորդների բարեկեցությանը: Սա նշանակում է, որ աշխատողները ոչ մի կերպ չեն չարաշահում հաճախորդների վստահությունը և չեն շահագործում նրանց, ինչպես նաև ոչ մի գործողությամբ՝ դիտավորյալ կամ կանխամտածված, նրանց վնաս չեն պատճառում:

3. Նվաճումներ և որակ

Որպես թիմ, մենք կենտրոնանում ենք մեր աշխատանքի արդյունքի վրա և ձգտում անել մեզանից կախված ամեն ինչ՝ գերազանց արդյունք ստանալու և հաջողության հասնելու համար:

Մենք ապահովում ենք մեր աշխատանքի արդյունքների և բանկի կողմից մատուցվող ծառայությունների բարձր որակը:

4. Պատասխանատվություն և պատկանելիություն

Որպես բանկի աշխատակիցներ՝ մենք հաշվի ենք առնում մեր գործողությունների հետևանքները և ստանձնում ենք պատասխանատվություն դրանց համար:

Մենք պատասխանատու ենք մեզ վրա դրված աշխատանքների կատարման և դրանց որակի համար, ինչպես նաև մեր աշխատանքային գործառույթները կատարելու ընթացքում ծագող խնդիրների լուծման համար:

Մենք բանկի շահերը ընկալում ենք որպես մեր սեփականը և հավասարապես պատասխանատու ենք հաղթանակների ու կորուստների համար՝ հետևելով պատկանելիության սկզբունքին:

5. Փոխվստահություն և թիմային աշխատանք

Մենք ներդնում ենք բոլոր ջանքերը վստահելի լինելու և մեր հաճախորդների ու գործընկերների վստահությունը ամրապնդելու համար:

Մենք հաջողության ենք հասնում համատեղ և թիմային աշխատանքի շնորհիվ:

Մենք ազնվություն ենք դրսևորում բոլոր անձնական և մասնագիտական գործնական հարցերում:

6. Թափանցիկություն և անվտանգություն

Որոշումների կայացման և դրանց իրականացման եղանակները սահմանելու համար մենք ընտրել ենք թափանցիկության սկզբունքները՝ ստեղծելով վստահելի աշխատանքային միջավայր:

Մենք պահպանում ենք անհրաժեշտ գաղտնիություն բոլոր նախաձեռնություններում և ունենք խիզախություն անընդունելի վարքին հակազդելու համար: